DOI: 10.54503/1829-4324.2025.2-268

4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌԸ

ՌՈԲԵՐՏ ՄԱՐԻՆՅԱՆ
ԲԵԼԼԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 09.11.25, ուղարկվել է գրախոսման՝ 11.11.25, երաշխավորվել է տպագրության՝ 24.12.25

Ամերիկյան հայտնի տնտեսագետ Պոլ Հեյնեն նկատում է թե. «Չափազանց մեծ թվով մարդիկ «գիտեն», թե ինչպես պետք է լուծել հասարակության անհետաձգելի խնդիրները: Տնտեսագիտությունը նրանց պատկերանում է որպես շատ պարզ կառուցված մի աշխարհ, որտեղ կարելի է շուտ իրացնել մտադրույթները, իսկ լավ հասարակություն ստեղծելու ճանապարհի միակ խոչընդոտը բարի մտադրությունների անբավարարությունն է: Բայց հասարակությունում իրականացվող ցանկացած գործողություն իր հետևից բերում է չնախատեսված և անկանխատեսելի հետևանքներ»[1]: Տասնամյակներ առաջ թվում էր, թե որոշակիացված են տնտեսական աճի հետ կապված հարցերը, հստակեցված այն պայմանավորող գործոնների շրջանակները, որը բովանդակային հավասարություն էր գծում տնտեսական աճ-զարգացում հասկացությունների միջև: Սակայն, ինչպես հաճախ, այս հարցում էլ «նորոգություններ» կատարվեց խնդրի վերարծարծումներում, ինչպես նշված հասկացությունների հստակեցման, այնպես էլ նոր կախվածությունների ու տնտեսության բովանդակային բնութագրությունների առումներով: Ճանաչողական այս դիտարկումների մեջ պիտի տեսնել Յու.Սուվարյանի և Մ.Մանուչարյանի «Տնտեսական զարգացման որակը և արդյունավետությունը»[2] ուսումնասիրությունը: Հեղինակները հարցերի գիտական դրվածքի զուգահեռներում ուրվագծում են տնտեսական աճի որակի գնահատման պատկերացումներն իրենց այլատար միտումների

[1]Պոլ Հեյնե, Տնտեսագիտական մտածելակերպ, Եր. , 2008, էջ 675:

[2] Սուվարյան Յու., Մանուչարյան Մ., Տնտեսական զարգացման որակը եվ արդյունավետությունը, Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում (միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու), Եր., 2024, DOI: 10.54503/978-9939-9312-4-1-16

մեջ: Անհրաժեշտություն չեմ տեսնում հանգամանալից անդրադառնալու տնտեսական աճի որակի գնահատման մոտեցումների հեղինակների դիտարկումներին, ինչը թանձրացված ձևով ներկայացված է հոդվածում: Մի դեպքում, թե աճը ինչպես է բաշխվում հասարակության տարբեր շերտերի և ընդհանուր բարեկեցության վրա, մի երկրորդ դեպքում կարևորվում է «էկոլոգիական հետքը»՝ որպես դեգրադացիայի բաղադրիչ, մի երրորդ դեպքում՝ երկարաժամկետ առումով արտադրողականության բարելավման ցուցանիշները, մի չորրորդ կարծիքով՝ զբաղվածություն/բնակչություն հարաբերություն գործակիցը, մի այլ դեպքում՝ մարդկային զարգացման և դիվերսիֆիկացիայի ինդեքսները և այլն: Սակայն և, արդյունավետության կապը շատ տարողունակ հասկացողություն է, որը պատճառի և հետևանքների ընդգրկումների թելերով կապված է ռեսուրսների աճի բնույթի, տնտեսության ճյուղային կառուցվածքի, երկրի մարտունակության, թողարկվող արտադրանքի (ծառայությունների) մրցունակության, արտահանման ու ներմուծման կառուցվածքի, գիտության, կրթության և այլ ենթահամակարգերի փոխգործողության հետ, որոնք ամբողջության մեջ ներդաշնակում են աճի որակի բնութագրության տարրերի միասնությունը՝ հայտնաբերելով նյութի բազմակի կապերն ու հարաբերությունները:

Տնտեսական զարգացման որակի և արդյունավետության կապի տարածական ընդգրկումների առումով անցած տարիների իր հետագծի մեջ վերը նշվածից յուրաքանչյուրը կարող է դառնալ առանձին քննության առարկա:

Շատ է գրվել հանրապետությունում շուկայական տնտեսությանն անցման ժամանակ թույլ տրված վրիպումների մասին: Շուտափույթ ապապետականացումը հանգեցրեց տնտեսական կառուցվածքների կազմալուծմանը, առանց ազգային տնտեսության նոր կառուցվածքի տեսլականի, որի ստեղծումը սովորաբար տևում է երկար ժամանակ: Տուրք էր տրվել այն մտայնությանը, թե շուկան ինքը կթելադրի տնտեսության ճյուղերի ապագա կառուցվածքը: Սակայն, տեսությունը մնում է տեսություն և միշտ չէ, որ այն համընկնում է սպասվող իրական պրոցեսներին ու ցանկություններին: Գոյություն ունի մի հայտնի արտահայտություն, թե թվերով երկիր չեն կառավարում, սակայն թվերը ցույց են տալիս, թե երկիրն ինչպես են կառավարում: Այս իմաստով ուշագրավ եմ դիտում Յու.Սուվարյանի և Մ.Մանուչարյանի հանրապետության ՀՆԱ-ի ճյուղային և ծախսային բաղադրիչների կառուցվածքի և արտադրանքի (ծառայությունների) մրցունակության՝ որպես տնտեսական զարգացման որակի և մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ցուցանիշների

վերլուծությունը: Եվ այսպես. «տնտեսությունն արդյունավետ չէ առնվազն երկու պատճառաբանությամբ: Առաջին հերթին այն ինքնաբավ չէ: Ինչ խոսք, ըստ աշխատանքի միջազգային բաժանման սկզբունքի, յուրաքանչյուր երկիր պարտադիր չէ, որ ամեն ինչ արտադրի, կարող է իր պահանջմունքների մի մասը ապահովել ներմուծման հաշվին: Սակայն անվիճելի է, որ երկիրը պետք է ունենա ինչպես ժամանակակից տեխնոլոգիապես զարգացած արդյունաբերություն, այլ նաև պետության անվտանգությունն ապահովող ռազմարդյունաբերության համալիր:

Երկրորդ՝ երկրի տնտեսությունը ինտեգրում է իր բնակչության մտավոր տեխնոլոգիական ներուժը և դրա արտացոլումն է: Այդ առումով տնտեսության նկարագրված պատկերը չի համապատասխանում հայոց արդի մտավոր և գիտատեխնիկական և ժամանակակից պահանջներին: … Գիտությունն ու տեխնոլոգիաներն են որոշում խնդիրների լուծումը՝ էներգետիկայից ու առողջապահությունից մինչև աղբահանություն: … Աշխարհի ռազմական ուժերն են նախաձեռնում, ֆինանսավորում ու որոշում մարդկության գիտական հնարավորությունների մի մեծ մասի ու տեխնոլոգիական զարգացման ուղղությունները»[3]:

Իսկ այս առումով անցյալ դարի 70-80-ական թվականներին Հայաստանը բնորոշվում էր ժամանակի համար բարձր զարգացած տեխնոլոգիաներով, բարձր որակավորում ունեցող մասնագետներով ու խնդիրների լուծման իր մասնակցությամբ:

Հոդվածի առաջադրույթից են բխում ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների՝ ըստ ապրանքային բաժինների, բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանման ու ներմուծման, արտաքին առևտրի՝ ըստ երկրների կառուցվածքի վերաբերյալ դիտարկումները:

Վերջին տարիների նշանակալից տեղաշարժերը ծառայությունների ոլորտում խրախուսելի է, բայց ստույգ է հանրապետության համար ժամանակի նշանից բխող այն դրույթը, որ «երկիրը անհրաժեշտաբար պետք է ունենա հեռանկարային տեխնոլոգիաներով հագեցած մշակող արդյունաբերություն», այլապես չենք ունենա ո՛չ կայուն տնտեսական աճ,

---

[3]Սուվարյան Յու., Մանուչարյան Մ., Տնտեսական զարգացման որակը եվ արդյունավետությունը, Սոցիալ-տնտեսական զարգացման հիմախնդիրներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում (միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու), Եր., 2024, DOI: 10.54503/978-9939-9312-4-1-16, էջ 25: (Հարկ է նկատել, որ դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին, ելակետ ունենալով ռազմարդյունաբերության ոլորտի աճող նշանակությունը տնտեսության և արդյունաբերության այլ ճյուղերի վրա, խորհրդային տնտեսագիտական միտքը կարծիքներ էր հայտնում «անքննելիի» իրավունք հանդիսացող Կ.Մարքսի վերարտադրության երկու ստորաբաժանումների վերաբերյալ՝ տեսությունը լրացնել որպես երրորդ ստորաբաժանում):

ո՛չ արդյունավետություն և ո՛չ էլ մրցունակ տնտեսություն, ինչը խնդիր է պարտադրում «տնտեսական նոր ռազմավարության ընդունումը և իրագործումը»[4]: Այսպիսին է հոդվածի նշանաբանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Քոթանյան Մ., Շուկայական էկոնոմիկա, Եր., 1998թ:
2. Եղիազարյան Բ., Մարդկային կապիտալը հասարակության զարգացման գործում, Եր., 2007:
3. Հեյնե Պ., Տնտեսագիտական մտածելակերպ, Եր. , 2008:
4. Սուվարյան Յու., Տնտեսություն, գիտություն և կրթություն, Եր., 2014:
5. Սուվարյան Յու., Ազգային նորամուծական համակարգ. ներուժի գնահատումը և հայեցակարգային գերակայությունները, Եր., 2017:
6. Սուվարյան Յու., Մանուչարյան Մ., Տնտեսական զարգացման որակը եվ արդյունավետությունը, Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիր-ներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայման-ներում (միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու), Եր., 2024, DOI: 10.54503/978-9939-9312-4-1-16
7. Зиберт Х., Эффект кобры, М., 2005.
8. Мау В.А., Экономический рост и институциональные реформы. – М.: Норма, 2016.
9. Бузгалин А.В., Колганов А.И., Качество экономического роста: теория и практика. –М.: ТЕИС, 2003.
10. Нуреев Р.М., Экономика развития.- М.: Норма, 2016.
11. Acemoglu D.P., Smith S.C., Economic development (12th ed.), Boston: Pearson.

[4]Սուվարյան Յու., Մանուչարյան Մ., Տնտեսական զարգացման որակը եվ արդյունավե-տությունը, Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներն արհեստական բանա-կանության նվաճումների ներդրման պայմաններում (միջազգային գիտաժողովի հոդ-վածների ժողովածու), Եր., 2024, DOI: 10.54503/978-9939-9312-4-1-16, էջ 26:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌԸ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
ԲԵԼԼԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածը անդրադարձ է Յու.Սուվարյանի և Մ.Մանուչարյանի տնտեսական զարգացման որակի և արդյունավետության կապի վերաբերյալ դիտարկումներին: Ներկայացվում է վերջիններիս փոխկապակցվածության տեսական և կիրառական հիմնախնդիրների վերլուծությունը՝ հատկապես Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում: Քննարկվում է տնտեսական աճի և զարգացման հասկացությունների տարբերակումը՝ շեշտադրելով, որ քանակական աճը ինքնին չի ապահովում կայուն զարգացում և հասարակական բարեկեցության բարձրացում: Արծարծվում են տնտեսական աճի որակի գնահատման ժամանակակից մոտեցումները՝ ներառյալ եկամուտների բաշխումը, արտադրողականությունը, զբաղվածության մակարդակը, մարդկային զարգացման ցուցանիշները, էկոլոգիական գործոնները ու տնտեսական դիվերսիֆիկացիան: Վերլուծվում է նաև տնտեսական արդյունավետության բազմաչափ բնույթը՝ կապելով այն ռեսուրսների օգտագործման, ճյուղային կառուցվածքի, արտահանման և ներմուծման հարաբերակցության, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիաների զարգացման հետ: Առանձին ուշադրություն է դարձվում շուկայական տնտեսությանն անցման ընթացքում թույլ տրված կառուցվածքային սխալներին և դրանց երկարաժամկետ հետևանքներին: Հոդվածում հիմնավորվում է այն դրույթը, որ բարձր տեխնոլոգիաներով հագեցած մշակող արդյունաբերության բացակայությունը սահմանափակում է երկրի մրցունակությունն ու ինքնաբավությունը, ինչպես նաև ընդգծվում, որ կայուն տնտեսական աճի և արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է նոր տնտեսական ռազմավարության մշակում և իրագործում՝ հիմնված գիտատեխնիկական ներուժի ամբողջական օգտագործման վրա:

Բանալի բառեր. տնտեսական աճ, զբաղվածություն, ռեսուրսներ, մրցունակություն, արդյունավետություն, ՀՆԱ, տեխնոլոգիական ներուժ:

ПАРАЛЛЕЛЬ МЕЖДУ КАЧЕСТВОМ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ И ЭФФЕКТИВНОСТЬЮ

РОБЕРТ САРИНЯН
БЕЛЛА ГАБРИЕЛЯН
ЛИАНА АРУТЮНЯН

Аннотация

В статье рассматриваются наблюдения Ю. Суваряна и М. Манучаряна о взаимосвязи качества и эффективности экономического развития. Представлен анализ теоретических и прикладных вопросов их взаимозависимости, особенно в контексте социально-экономического развития Республики Армения. В статье обсуждается различие между понятиями экономического роста и развития, подчеркивается, что количественный рост сам по себе не гарантирует устойчивого развития и повышения социального благополучия. Рассматриваются современные подходы к оценке качества экономического роста, включая распределение доходов, производительность труда, уровень занятости, показатели человеческого развития, экологические факторы и экономическую диверсификацию. В статье также анализируется многомерный характер экономической эффективности, связывая ее с использованием ресурсов, структурой промышленности, соотношением экспорта и импорта, а также развитием науки и техники. Особое внимание уделяется структурным ошибкам, допущенным в процессе перехода к рыночной экономике, и их долгосрочным последствиям. В статье обосновывается тезис о том, что отсутствие высокотехнологичной обрабатывающей промышленности ограничивает конкурентоспособность и самодостаточность страны, а также подчеркивается необходимость разработки и реализации новой экономической стратегии, основанной на полном использовании научно-технического потенциала, для обеспечения устойчивого экономического роста и эффективности.

Ключевые слова: Экономический рост, занятость, ресурсы, конкурентоспособность, эффективность, ВВП, технологический потенциал.

THE PARALLEL BETWEEN THE QUALITY OF ECONOMIC DEVELOPMENT AND EFFICIENCY

ROBERT SARINYAN
BELLA GABRIELYAN
LIANA HARUTYUNYAN

Abstract

This article addresses the insights of Yu. Suvaryan and M. Manucharyan on the relationship between the quality and efficiency of economic growth. It presents an analysis of the theoretical and applied issues underlying this interrelationship, with particular emphasis on the socio-economic development of the Republic of Armenia. The distinction between economic growth and economic development is examined, highlighting that quantitative growth alone does not ensure sustainable development or improvements in social welfare.

The article discusses contemporary approaches to assessing the quality of economic growth, including income distribution, productivity, employment levels, human development indicators, environmental factors, and economic diversification. It also analyzes the multidimensional nature of economic efficiency, linking it to resource utilization, sectoral structure, export–import composition, and the development of science and technology.

Special attention is given to structural distortions that emerged during the transition to a market economy and their long-term consequences. The study substantiates the argument that the absence of a high-technology-oriented manufacturing sector constrains national competitiveness and self-sufficiency. It further emphasizes that ensuring sustainable economic growth and efficiency requires the formulation and implementation of a new economic strategy based on the full utilization of the country's scientific and technological potential.

Keywords: economic growth, employment, resources, competitiveness, efficiency, GDP, technological potential.